

# ԷՐՏՈՂԱՆ՝ ՕՐԻՆ ՄԵՋ ԵՐԿԱՐԱԾ ԼԵԶՈՒ ՄԸ

*Posted on December 22, 2011 by Keghart*



Category: [Opinions](#)



**Սայիտ Աս-Սապպահ, “Ալ-Պիսէ՛”, Պեյրուզ, 2 Դեկտեմբեր 2011**

Հայացուց մերթ Գ. Տերտերեան

Բախտի ծաղրանք մըն է՝ երբ թուրք վարչապետ մը Կոլանի ճակատին չբացուիլը վերագրէ Սուրիոյ պարտուողական կեցուածքին...: Այս նոր-թուրանականը մոռացութեան կու տայ՝ որ Պաղեստինի շուրջ արաբ եւ իսրայելեան հակամարտութեան պատմութիւնը, եւ՝ ատոր գուպարին մէջ Սուրիոյ խաղացած կեդրոնական դերը, սկսած՝ Պաղեստինի մէջ սիոնական գաղութներու վերաբնակեցումի շարժումէն, 19-րդ դարու վերջերէն, մինչեւ 1948 թուի Պաղեստինի շուրջ պատերազմը, որուն մէջ Սուրիոյ երիտասարդ բանակը ունեցաւ պատուաբեր դերակատարութիւն, եւ այնուհետեւ՝ շարունակեց կատարել իր դերը փայլուն կերպով, զինադադարի գիծի երկայնքին տեղի ունեցած բոլոր արիւնալի ճակատումներուն մէջ: Իսկ 1967-ին, արաբներու դէմ կատարուած “իսրայելեան” նախայարձակումին դիմակայելով՝ սուրիական բանակը արձանագրեց հերոսական էջեր Կոլանի մէջ, որուն բլուրները պաշտպանեց թիզ առ թիզ, եւ այս մասին վկայեցին զինուորական օտար յայտնի մասնագետներ, որոնց շարքէն յիշենք Էտուար Օփալանսը, որուն լոյս ընծայած հատորը, այս պատերազմին մասին, արաբերէնի թարգմանեց այժմ հանգուցեալ Մազէն Ալ-Պանտաբ:



**Սայիտ Աս-Սապպահ, “Ալ-Պիսէ՛”, Պեյրուզ, 2 Դեկտեմբեր 2011**

Հայացուց մերթ Գ. Տերտերեան

Բախտի ծաղրանք մըն է՝ երբ թուրք վարչապետ մը Կոլանի ճակատին չբացուիլը վերագրէ Սուրիոյ պարտուողական կեցուածքին...: Այս նոր-թուրանականը մոռացութեան կու տայ՝ որ Պաղեստինի շուրջ արաբ եւ իսրայելեան հակամարտութեան պատմութիւնը, եւ՝ ատոր գուպարին մէջ Սուրիոյ խաղացած կեդրոնական դերը, սկսած՝ Պաղեստինի մէջ սիոնական գաղութներու վերաբնակեցումի շարժումէն, 19-րդ դարու վերջերէն, մինչեւ 1948 թուի Պաղեստինի շուրջ պատերազմը, որուն մէջ Սուրիոյ երիտասարդ բանակը ունեցաւ պատուաբեր դերակատարութիւն, եւ այնուհետեւ՝ շարունակեց կատարել իր դերը փայլուն կերպով, զինադադարի գիծի երկայնքին տեղի ունեցած բոլոր արիւնալի ճակատումներուն մէջ: Իսկ 1967-ին, արաբներու դէմ կատարուած “իսրայելեան” նախայարձակումին դիմակայելով՝ սուրիական բանակը արձանագրեց հերոսական էջեր Կոլանի մէջ, որուն բլուրները պաշտպանեց թիզ առ թիզ, եւ այս մասին վկայեցին զինուորական օտար յայտնի մասնագետներ, որոնց շարքէն յիշենք Էտուար Օփալանսը, որուն լոյս ընծայած հատորը, այս պատերազմին մասին, արաբերէնի թարգմանեց այժմ հանգուցեալ Մազէն Ալ-Պանտաբ:



Սուրիական այս բանակն է, որ յաջողապես մղեց 1973 թուի Հոկտեմբերի պատերազմը “Իսրայել”ի դեմ, վախճանեալ նախագահ Հաֆեզ Ասատի հրամանատարութեան տակ, զինակցելով եգիպտական բանակին հետ, եւ կարողացաւ ազատագրել Կուլանը, եւ սակայն, այս պատերազմը աւարտեցաւ անբաղձալի արդիւնքով... դաւաճանութեամբը Էնվեր Սատաթի, որ անայլայլօրէն ու լիահագագ յայտարարեց՝ որ ինք, Հոկտեմբերի պատերազմը մղեց պարզապէս իրավիճակը շարժելու... եւ՝ հակամարտութեան հանգուցալուծումի բանալին տալով՝ իր սիրեցեալին, Քիսինճըրին...:

Երտոդան անուն այս նոր-թուրանականը լսած չէ՞ր արդեօք՝ սուրիական բանակին մղած հարիւրօրեայ կռիւին մասին, զոր ան մղեց Հոկտեմբերի պատերազմի վաղորդայնին, ազատագրելով կարեւոր շրջաններ Կուլանէն, ինչպէս՝ Քոնէյթրա քաղաքը...:

Երտոդան Էֆէնտին կարդացած չէ՞ երբեք՝ Ասատի Սուրիոյ թափած այն յարատել ջանքերուն մասին, որոնց շնորհիւ Սուրիա յաջողուց միութիւնը Իրաքի հետ, ամրապնդեց հիմերը զինակցութեան մը՝ յեղափոխական Իրանի եւ Սովետ Միութեան հետ եւ աջակցեցաւ Լիբանանի, Պաղեստինի եւ Արաբ աշխարհի միւս բոլոր դիմադրական շարժումներուն...:

Այս արեւմտամետ-թուրանականը, որ կեղծաւորաբար հագած է “Իսլամի դիմակը”, իրօք մոռցած է՝ նախագահ Տոքթ. Պաշար Ասատի ի գործ դրած ճիգերը՝ ստեղծելու Արաբ-Իսլամ զինակցութիւն մը, ընդգրկելով՝ Սուրիոյ կողքին, Իրանը, Թուրքիան եւ դիմադրական տարբեր շարժումներ, դիմակայելու համար սիոնա-իմփերիալիստական ծրագրերուն, եւ ստեղծելով՝ քաղաքատնտեսական ընդդիմադիր համախմբում մը...:

Բայց ի՞նչ ըրիք դուք՝ Երտոդան Էֆէնտի...:

Փաստօրէն՝ աշխատեցաք Սուրիոյ մէջ բորբոքելու դաւանական պառակտումի կրակը, հովանաւորելու ոճրագործներու, արդարադատութենէն փախստականներու եւ քրեագործներու խմբակներ, անոնց տրամադրելով յատուկ որջեր ձեր հողերուն վրայ եւ զանոնք մկրտելով՝ “Ազատն Սուրիոյ Բանակ” անունով, որուն պարագլուխն է սուրիական բանակի շարքերուն կողմէ անիծեալ մեքենագետ սպայ մը՝ “Ռիատ Ալ-Ասատ” կոչեցեալ, որ ձեր տրամադրած որջերէն քորոզացաւ՝ թէ իր կարծեցեալ բանակը յաջողած էր դաւադրաբար սպաննել հոյլ մը՝ սուրիական օդուժի արծիւներէն...:

Մենք սա Երտոդանին հարց կու տանք, ի՞նչ կեցուածք ունեցած են թրքական իրերայաջորդ կառավարութիւնները՝ Արաբ-սիոնական հակամարտութեան հանդէպ: Թուրքիան չէ՞ր այն իսլամական առաջին երկիրը, որ ճանչցաւ “Իսրայելը”, եւ տակաւին՝ ամենասերտ զինուորական, քաղաքական, տնտեսական, փորձագիտական ու ապահովական կապեր հաստատեց անոր հետ...:

Երտոդան Էֆէնտի, դուն եւ քու մեծասքանչ կուսակցութիւնդ ի՞նչ բանով սատարեցիք պաղեստինեան դատին...:

Իրականութեան մէջ, սիոնական թշնամին ձեզի տուաւ ապտակ՝ ապտակի ետեւէ,

որոնց ամենաուժգինը եղան՝ “ազատութեան նաւ”ուն տրուած հարուածը եւ “Իսրայել”ի մօտ ձեր դեսպանին նուաստացումը, եւ եբրայական կառավարութիւնը յամառօրէն մերժեց ներողութիւն հայցել Թուրքիայէն...:

“Ազատութեան նաւ”երը պաշտպանելու համար դուք միայն ակնարկեցիք թրջական ռազմականութիւնը ուղարկելու մասին, եւ սակայն, այդ մասին՝ դուք բաւականացաք լոկ խօսքեր արձակելով...:

Դուք նոյնպէս՝ միայն խօսեցաք, թէ կը ծրագրէիք այցելել շրջափակեալ Կազախի մարզ, եւ սակայն, հոս ալ վախցաք նման քայլի մը վնասակար հետեւանքներէն...:

Եւ յետոյ՝ որոշեցիք ատլանտեան ուխտի հակահրթիռային վահանակին հաստատումը արտօնել Թուրքիոյ հողերուն վրայ... որուն նպատակն է “Իսրայել”ի պաշտպանութիւնը... եւ միաժամանակ աշխատեցաք յաջողեցնելու ամերիկեան-“իսրայելական” (“Իսլամ եղբայրներ” ու...) գործառք մը, որուն նպատակն է՝ “Իսրայել”ի եւ Արեւմուտքի հետ հաշտուած “իսլամական” վարչակարգերու համախմբումի մը ստեղծումը... խափանելու համար Արաբ-Իսլամ դիմադրական եւ ընդդիմադիր ճակատի մը ստեղծումը...: Ճակատ մը՝ որ արդէն ձեւաւորուիլ սկսած է Պելուճիստանի լեռներէն մինչեւ Նաքուրա եւ Կազա...:

Դուք բարձրաձայն կը բարբռիք՝ թէ պատրաստ էք ճակատելու “Իսրայել”ի դէմ, մեղադրելով ճշմարիտ դիմադրականները՝ թշնամիին հետ ճակատումէն փախուստ տալու մէջ... մինչդեռ դուք՝ ամենասերտ զինակիցները կը մնաք սիոնական թշնամիին եւ անոր տերերուն՝ իմփերիալիստ Արեւմուտքին... ջանալով հանդերձ խափանել ճշմարիտ դիմադրականներու եւ ընդդիմադիր պետութիւններու համախմբուելու ջանքերը...:

Իսկապէս տարօրինակ է՝ երբ սա Էրտողանը կը բարբառի, ժողովուրդներու կեանքին եւ ազատութեան պաշտպանութեան ի խնդիր... երբ իրեն համար աւելի լա՛ւ պիտի ըլլար՝ որ ան ներողութիւն հայցեր հայ ժողովուրդին, որուն դէմ իր օսմանցի նախորդները գործած էին զանգ ու ճային ջարդեր, եւ՝ հայ ժողովուրդին վերադարձներ անկէ բռնազաւթուած հողերը... եւ նոյնը ըներ քիւրտ ժողովուրդին հանդէպ:

Տակաւին, մեր Արաբ ազգը եւս ունի հի՛ն հաշիւ մը Էրտողանի պետութեան հետ, ատիկա Իսկէնտերունի Սանճաքի բռնազաւթումն է Թուրքիոյ կողմէ եւ անոր բնիկ ժողովուրդին տարագրումը... ինչ որ կատարուած է նոյնպէս՝ Կիլիկիոյ եւ անոր շրջակայքին մէջ...:

Լաւատեղեակներ անկեղծ թելադրութիւն մը ունին Էրտողանին եւ անոր կուսակցութեան աւագանիին՝ շուտափոյթ կերպով հեռանալու Թուրքիայէն... որովհետեւ՝ իրենց կը սպասէ այն նոյն ճակատագիրը, որուն արժանացան՝ զինք նախորդող վարչապետ Ատնան Մենտերեւը, եւ հանրապետութեան նախագահ Ճելալ Պայարը...:

Էրտողան չափազանցօրէն կը շաղակրատէ բազմաթիւ հարցերու մասին, եւ կը փորձէ

հանդէս գալ առասպելական հերոսի մը կերպարանքով...: Իսկ անոր  
“բարբառանքներուն” ճիշդ կը սագի բանաստեղծի մը սա խօսքը՝ “օդին մէջ երկարած  
լեզու մը”...:

***Լիբանանցի սիւնակագիր Սայիտ Աս-Սապահի այս գրուածան բնագիրը լոյս  
տեսած է “Ղովմի-Սուրի” կուսակցուածան “Ալ-Պիսէ” օրաթերթի 2 Դեկտեմբեր  
2011 թուակիր համարին մէջ, զոր հայացուցած է մերթ Գ. Տերտերեան՝  
լիբանանահայ երեք օրաթերթերուն համար:***

